ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑԱՆ

I. ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԴԵՊՔԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

1. . Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019թ. նոյեմբերի 26-ի թիվ 25/1 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշմամբ հաստատված տարեկան ծրագրով ՀՀ առողջապահության նախարարությունում իրականացվելիք պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության, ինչպես նաև Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ, Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն և Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում ծրագրերի հաշվեքննության շրջանակներում իրականացվող աշխատանքներով:

Վերոնշյալ հաշվեքննությունն իրականացնելու համար վարչությանն անհրաժեշտ է մասնագիտական գիտելիքներ ունեցող փորձագետ:

II. ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2. Բարձրագույն կրթություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

3. Փորձագետը ներգրավվում է պայմանագիրը կնքելու պահից մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ներառյալ:

IV. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

4. Փորձագետի ներգրավմամբ ակնկալվում է վերջինիս մասնակցությունը ՀՀ առողջապահության նախարարությունում իրականացվելիք պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության, ինչպես նաև Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ, Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն և Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում ծրագրերի հաշվեքննությանը:

V. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Փորձագետը հաշվետվություն ներկայացնում է մինչև աշխատանքների իրականացման սահմանված ժամանակահատվածի ավարտը:

VI. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

6. Սույն ծրագրի 1-ին կետով սահմանված աշխատանքների ժամանակին և որակյալ իրականացում, ինչպես նաև դրանց արդյունքներով հաշվետվության կազմում ու 5-րդ կետով սահմանված ժամկետներում ներկայացում:

Հարցազրույցին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում (**ձևը կցվում է**)
- մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի/ների/, վկայականի/ների/, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է 13.01.2020**թ. ներառյալ:**
ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

ք. Երևան, Բաղրամյան 19, ՀՀ հաշվեքննիչ պալատ

հեռ. 011-888-145, էլ.փոստ՝ kadrer@armsai.am:

Հարցազրույցին անհրաժեշտ է ներկայանալ անձը հավաստող փաստաթղթով և ներկայացված փաստաթղթերի բնօրինակներով: